# ԿԱՆԹԵՂ

## ՄՈՆԹՐԷԱԼԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ
## ԵԿԵՂԵՑՒՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

**GANTEGH**

BULLETIN DU DIMANCHE
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE
ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL

**GANTEGH**

SUNDAY BULLETIN OF
ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

**WWW.SAINTGREGORY.CA**

***ԿԻՐԱԿԻ, 23 ԱՊՐԻԼ 2017***
***Կրկնազատիկ - ԹԻՒ 3***

***SUNDAY, APRIL 23, 2017***
***Octave of Easter – no – 3***



# TODAY'S BIBLE READINGS

## John1-1:7 | James 3-1:12|

***Պատարագիչ՝ ԱՐԺ. Տ. ԵՂԻԱ Ա ՔՀՆՅ. ՔԵՐՎԱՆՃԵԱՆ***
***Celebrant: REV. ARCH. FR. YEGHIA KERVANJYAN***

***Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan, Dn. Vahan Shakaryan, Dn. Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan***
***Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjian***
***Choirmaster: Mr. Murat Demirdogen***
***Organist: Mr. Karen Manucharyan***

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
secretary@saintgregory.ca | www.saintgregory.ca

# Կիրակնօրեայ Ընթերցումներ



**Les lectures de dimanche** | **The Sunday Readings**

## ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 1-1:17

**1Սկիզբէն էր Խօսքը, ու Խօսքը Աստուծոյ քով էր, եւ Խօսքը Աստուած էր. 2ան
սկիզբէն Աստուծոյ քով էր: 3Ամէն ինչ եղաւ անո՛վ. եղածներէն ո՛չ մէկը եղաւ առանց
անոր: 4Կեանքը անով էր, ու կեանքը մարդոց լոյսն էր. 5լոյսը կը փայլէր խաւարի մէջ,
բայց խաւարը չճանչցաւ զայն:**

**6Աստուծմէ ղրկուած մարդ մը կար՝ որուն անունը Յովհաննէս էր: 7Ասիկա եկաւ
վկայութեան համար՝ որ վկայէ Լոյսին մասին, որպէսզի բոլորը հաւատան անոր
միջոցով: 8Ինք չէր այդ Լոյսը, հապա եկաւ՝ որպէսզի վկայէ Լոյսին մասին:**

**9Ճշմարիտ Լոյսը ա՛ն էր՝ որ կը լուսաւորէ աշխարհ եկող՝՝ ամէն մարդ: 10Ինք
աշխարհի մէջ էր, եւ աշխարհը եղաւ իրմով, բայց աշխարհը չճանչցաւ զինք:
11Իրեններուն եկաւ, սակայն իրենները չընդունեցին զինք: 12Բայց անոնց՝ որ
ընդունեցին զինք - անոնց՝ որ կը հաւատան իր անունին - իրաւասութիւն տուաւ
Աստուծոյ զաւակներ ըլլալու: 13Անոնք ո՛չ արիւնէն եւ ո՛չ մարմինի կամքէն ծնան, ո՛չ
ալ մարդու կամքէն, հապա՝ Աստուծմէ:**

**14Եւ Խօսքը մարմին եղաւ ու մեր մէջ բնակեցաւ, (եւ դիտեցինք անոր փառքը՝ Հօրը
միածինի փառքին պէս,) շնորհքով ու ճշմարտութեամբ լեցուն: 15Յովհաննէս վկայեց
անոր մասին, եւ աղաղակեց. «Ասիկա՛ է ան՝ որուն մասին կ՚ըսէի. “Ան որ իմ ետեւէս
կու գայ՝ իմ առջեւս եղաւ, որովհետեւ ինձմէ առաջ էր”: 16Եւ անոր լիութենէն մենք
բոլորս ստացանք շնորհք շնորհքի վրայ: 17Որովհետեւ Օրէնքը տրուեցաւ Մովսէսի
միջոցով, բայց շնորհքն ու ճշմարտութիւնը եղան Յիսուս Քրիստոսի միջոցով: 18Ո՛չ
մէկը երբե՛ք տեսած է Աստուած. բայց միածին Որդին՝ որ Հօրը ծոցն է, ի՛նք պատմեց
անոր մասին:**

## JOHN 1.1:7

***1 In the beginning was the Word, and the Word was with God, and the Word was God. 2 The same was in the beginning with God. 3 All things were made by him; and without him was not anything made that was made. 4 In him was life; and the life was the light of men. 5 And the light shineth in darkness; and the darkness comprehended it not. 6 There was a man sent from God, whose name was John.***

***7 The same came for a witness, to bear witness of the Light, that all men through him might believe. 8 He was not that Light, but was sent to bear witness of that Light. 9 That was the true Light, which lighteth every man that cometh into the world. 10 He was in the world, and the world was made by him, and the world knew him not. 11 He came unto his own, and his own received him not. 12 But as many as received him, to them gave he power to become the sons of God, even to them that believe on his name: 13 Which were born, not of blood, nor of the will of the flesh, nor of the will of man, but of God. 14 And the Word was made flesh, and dwelt among us, (and we beheld his glory, the glory as of the only begotten of the Father,) full of grace and truth. 15 John bare witness of him, and cried, saying, this was he of whom I spake, He that cometh after me is preferred before me: for he was before me. 16 And of his fullness have all we received, and grace for grace. 17 For the law was given by Moses, but grace and truth came by Jesus Christ.***

## ՅԱԿՈԲՈՍ 3-1:12

1Եղբայրնե՛րս, ձեր մէջ շատ վարդապետներ թող չըլլան, գիտնալով թէ աւելի
խստութեամբ պիտի դատուինք՝՝: 2Որովհետեւ բոլորս ալ կը սայթաքինք շատ բաներու
մէջ. եթէ մէկը չի սայթաքիր խօսքով՝ կատարեալ մարդ է, կարող՝ սանձելու նաեւ
ամբողջ մարմինը: 3Ահա՛ ձիերուն բերանը սանձ կը դնենք՝ որպէսզի հնազանդին մեզի,
եւ կը կառավարենք անոնց ամբողջ մարմինը: 4Ահա՛ նաւերն ալ, որ ա՛յդչափ մեծ են ու
կը քշուին սաստիկ հովերէն, կը կառավարուին ամենափոքր ղեկով մը՝ ի՛նչպէս
նաւուղիղը փափաքի: 5Այդպէս ալ լեզուն պզտիկ անդամ մըն է, բայց կը պարծենայ մեծ
բաներով: Ահա՛ ո՛րչափ նիւթ կը վառուի քիչ մը կրակով: 6Լեզո՛ւն ալ կրակ մըն է,
անիրաւութեան աշխարհ մը: Լեզուն ա՛յնպէս դրուած է մեր անդամներուն մէջ, որ
կ՚ապականէ ամբողջ մարմինը ու կը բռնկեցնէ բնութեան շրջանը, իսկ ինք կը բռնկի
գեհենէն: 7Գազաններու, թռչուններու, սողուններու եւ ծովային արարածներու ամէն
բնութիւն՝ կը նուաճուի ու նուաճուած է մարդկային բնութենէն: 8Բայց ո՛չ մէկը կրնայ
նուաճել լեզուն. ան անզուսպ չար է, լի մահաբեր թոյնով: 9Անո՛վ կ՚օրհնաբանենք
Աստուած ու Հայրը, եւ անո՛վ կ՚անիծենք մարդիկ՝ որ ստեղծուած են Աստուծոյ
նմանութեամբ: 10Միեւնոյն բերանէն կ՚ելլեն օրհնաբանութիւն եւ անէծք: Եղբայրնե՛րս,
պէտք չէ որ այս ա՛յսպէս ըլլայ: 11Միթէ աղբիւր մը միեւնոյն ակէն կը բխեցնէ՞ անոյշ ու
դառն ջուր: 12Եղբայրնե՛րս, թզենին կրնա՞յ ձիթապտուղ տալ, կամ որթատունկը՝ թուզ:
Նմանապէս՝ ո՛չ մէկ աղբիւր կրնայ տալ թէ՛ աղի, թէ՛ անոյշ ջուր:

# *JAMES 3.1:12*

**1 My brethren, be not many masters, knowing that we shall receive the greater
condemnation. 2 For in many things we offend all. If any man offend not in word,
the same is a perfect man, and able also to bridle the whole body. 3 Behold, we
put bits in the horses' mouths, that they may obey us; and we turn about their
whole body. 4 Behold also the ships, which though they be so great, and are driven
of fierce winds, yet are they turned about with a very small helm, whithersoever
the governor listeth. 5 Even so the tongue is a little member, and boasteth great
things. Behold, how great a matter a little fire kindleth! 6 And the tongue is a fire,
a world of iniquity: so is the tongue among our members, that it defileth the whole
body, and setteth on fire the course of nature; and it is set on fire of hell. 7 For
every kind of beasts, and of birds, and of serpents, and of things in the sea, is
tamed, and hath been tamed of mankind: 8 But the tongue can no man tame; it is
an unruly evil, full of deadly poison. 9 Therewith bless we God, even the Father;
and therewith curse we men, which are made after the similitude of God. 10 Out
of the same mouth proceedeth blessing and cursing. My brethren, these things
ought not so to be.**

**11 Doth a fountain send forth at the same place sweet water and bitter? 12 Can
the fig tree, my brethren, bear olive berries? either a vine, figs? so can no fountain
both yield salt water and fresh.**



## *« Ուրախ եղէք ինծի հետ, վասն զի իմ կորսուած ոչխարս գտայ»:*

## *(Ղուկաս ԺԵ:6)*



«Ուրախ եղէք ինծի հետ, վասնզի իմ կորսուած ոչխարը գտայ: Ձեզի կ'ըսեմ որ այսպէս ուրախութիւն պիտի ըլլայ երկնքի մէջ մէկ մեղաւորի համար որ կ'ապաշխարհէ, քան թէ իննսունինը արդարներու համար որոնց ապաշխարութեան պէտք չէ»: Յուդայի երկիրը լեռնային շրջան մը ըլլալով, շատ դիւրութեամբ ոչխար մը կրնար մոլորիլ ու կորսուիլ ժայռերու խոռոչներուն մէջ: Բայց պաղեստինցի հովիւներ, անուանի ճարպիկութեան մէջ, կը հետեւէին կորսուած ոչխարի հետքերուն ու զայն գտնելով կը բերէին գիւղ մեծ հպարտանքով եւ ուրախութեամբ: Ոչխարը ըլլալով ընտանի եւ օգտակար կենդանի մըն է մանաւանդ իր ունեցած բնաւորութեան համար, անմեղութեան, հնազանդութեան եւ համբերութեան,լայն տեղ գըտած է Ս.Գրոց մէջ:

Ոչխարը իր օգտակարութեան համար փնտռուած կենդանի մըն է. անոր միսը կ'ուտենք, բուրդը եւ մորթը կը գործածենք. ոչխարին արժէքին համար հովիւը կը խնամէ զայն ու կը փնտռէ երբ անիկայ մոլորի հօտէն: Ոչխարը ըլլալով անբան անասուն մը, եթէ հովիւին խնամքին առարկան կը դառնայ, որքան առաւել արժէք կը ներկայացընէ մարդը որ խորհող էակ մըն է, եւ օժտուած իմացական ու հոգեկան բարձր կարողութիւներով, քան ոչխարը յաչս Աստուծոյ:

Քրիստոս, մարդոց հովիւը, որքան առաւել գուրգրանքով ու հասկացողութեամբ կը փնտռէ իր եկեղեցիէն մոլորած մարդը, քանի որ «որչափ եւս առաւել է մարդ քան զոչխար» (Մատթ.Ժբ.12):

Յուդայի երկրի լեռներէն ու խոռոչներէն աւելի վտանգաւոր են արդի ընկերութեան կարգն ու սարքը և բարքը, քիստոնեայ մարդը մոլորեցնելու և կորստեան դատապարտելու համար: Առօրեայ մեր կեանքին ընթացքին հրապուրիչ, քաշողական փուսերու կը հանդիպինք, և մեր կամեցողութեամբ

կը գահավիժենք անոնց մէջ: Մենք զմեզ կը նսեմացնենք ու կ'իջնենք անբան ոչխարի մակարդակին: Բայց, մշտարթուն հովիւը, Յիսուս Քրիստոս, որ մեր սիրոյն համար զոհուեցաւ խաչին վրայ, Ս.Հոգւոյն շնորհիւ կը հետեւի մեր մոլարած քայլերուն ու մեզ կը փրկէ մեր մեղքերէն: Այս առակին պատմութիւնը ցոյց կուտայ մարդ անհատին արժէքը տիեզերքի ստեղծագործութեան մէջ:

Քրիստոսի սերմանած ցորենի հատիկի նման խօսքերը ուռճացան անհատներու եւ ժողովուրդներու մէջ, ինչպէս գարնան բնութիւնը կարդնայ ու կը գեղեցկանայ երկրամասը, հրեշտակի թափուր գերեզման յայտարարութեամբ իր արդիւնքը տուաւ ու յիւղաբեր կիներու անձին մէջէն բոլոր ժողովուրդներ զատկի աւետիսը ստացան: Յարութեան առաջին պտուղը եղան առաքեալներ եւ յիւղաբեր կիներ: Այո սիրելի ժողովուրդ մենք ալ այդ յարութեան աւետիսին պտուղներն ենք: Այո սիրելի ժողովուրդ մեր մենք ալ այդ յարութեան աւետիսին պտուղներն ենք: Յիւրաքանչիւր քրիստոնեայ անհատ արժէք մըն է Աստուծոյ աչքին: Աստուած կը սիրէ իր նմանութեամբ ստեղծած մարդը, երբ կը տեսնէ որ մենք կը հետեւինք իր Որդւոյն քայլերուն, երբ կ'ապրինք Քրիստոսի ուսուցումներուն համեմատ բարոյական կեանք մը: Հետեւինք անզուգական հովիւին, Յիսուս Քրիստոսի, որ գիտէ մեր իւրաքանչիւրին արժանիքը: Ան իր անսահման աստուածային սիրով կը հսկէ մեր վրայ, կը խնամէ մեզ ու կ'օգնէ մեզի մեր իմացական, հոգեկան ու բարոյական նուաճումներու մէջ, մեզ դարձնելով Աստուծոյ գործակիցները աշխարհին մէջ: Յիսուսի յարութեան աւետիքը մոլորեալ ոչխարին համար դարձաւ հոգեւոր մի նոր փրկութիւն: Քրիստոս, մոլորեալ մի ոչխարին ու բոլոր ազգերուն կեանքը և պատմութիւնը հեղաշրջեց: Տուաւ մարդկանց հոգեկան հրաշալի ապրումներ դարեր շարունակ: Անոր Յարութիւնը ամէն տարի միշտ նոյն ուժգնութեամբ, միշտ նոյն թարմութեամբ, միշտ նոյն ջերմութեամբ կը համակէ մարդկանց ողջ էութիւնը: Զատիկը սիրելիներ բոլորիս հոգիին զարթօնքը դարձած է, ժողովուրդներուն յաղթութիւնը: Յիսուս իր յարութեամբ մոլորեալ ոչխարին համար փրկութեան ճանապարհը պատրաստեց: Յաւիտենական կեանքի մեր յոյսը, անմար մնալու համար Քրիստոս իր խաչելութեամբ եւ Յարութեամբ Զատիկը մեզ նուիրեց: Այս օր կրկնազատիկ է սիրելիներ վերյիշեցում մեր փրկութեան գարնանման ճանապարհին:

## Քրիստոս Յարեաւ ի մեռելոց:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**DON À L'ÉGLISE**

**DONATION FOR THE CHURCH**

***Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal, QC***

## *Donations of April have been received with great appreciation 2017*

*Mr. & Mrs. Ghazar & Elizabeth Matian* ***$150****, Mrs. Seta Artokun* ***$55.***

***LADIES AUXILIARY***

*Mrs. Maida Labajian* ***$50.***

***FLOWERS GOOD FRIDAY***

*Mrs. Hilda Tursucu* ***$20.***

***IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:***

***THE LATE KNAR DEUVLETIAN***

*Mrs. Suzanne Wright* ***$50.***

***HOKEHANKISD EASTER MERELOTZ:***

***THE LATE ECITYAN FAMILY***

*Mr, & Mrs. Mihran & Yercanik Ecityan* ***$30.***

***THE LATE MEREMETCI FAMILY***

*Mrs. Pergruhi Meredmetci* ***$40.***

***THE LATE GRIGORYAN FAMILY***

*Mr. Hrant Grigoryan* ***$20.***

***THE LATE GURUNLU FAMILY***

*Mr. Agop Gurunlu* ***$50.***

***THE LATE VAROSIAN FAMILY***

*Mrs. Nina & Zina Varosian **$40.***

***THE LATE SAAKIAN FAMILY***

*Mrs. Anna Saakian **$20.***

***THE LATE BABOYAN FAMILY***

*Mrs. Varteni Baboyan **$10.***

***THE LATE ZANAZANIAN FAMILY***

*Mr. & Mrs. Yervant & Lana Zanazanian **$100.***

***EASTER EGG DONATION:***

*Mrs. Karin Derderyan **$40,** Mrs. Nazan Turac, Mrs. Tamar Komurcuoglu, Mrs. Natalie Met **$20.***

***YOUGHAKIN EASTER:***

*Mr. & Mrs. Garo & Michelle Boghosian **$300**, Mr. & Mrs. Mike & Karine Guiragossian , Mrs. Aline Chichmanian Hun, Miss Hermine Mekhgeavakiani **$200,** Mr. & Mrs. Garabet Pilavyan, Mr. & Mrs. Antoine & Sonia Boulos **$150,** Mr. & Mrs. Onnig Yavru, Mrs. Anahid Seropian, Mr. & Mrs. Onnik & Marioe Pilafian, Mr. Henri Nahabedian, Dr. & Mrs. Nurhan & Ani Ecityan, Mr. & Mrs. Jean Dertadian, Mr. & Mrs. Agop & Takuhi Sirinyan, Mr. & Mrs. Roupen & Sossi Arakelian, Mr. & Mrs. Nersses & Rachel Doramajian, Mr. Sako Avakian, Mr. Herman Yuruten, Mr. Leon Kazanjian, Mr. Nubar Turac, Mr. Berdj Basmadjian **$100,** Mr. Hagop Kazanjian **$85,** Mrs. Hilda Kepekci **$75,** Ms Soushia Marhouziannozhad, Mr. & Mrs. Garbis & Silva Ferah, Mr. & Mrs. Wanis Basmadjian, Mr. Manvel Markosyan, Mr. & Mrs. Harout & Seza Nalbandian, Mr. & Mrs. Diran Attarmigiroglu, Mr. Boghos Sahaguian, Mr. & Mrs. Roupen & Meline Arsever, Mrs. Arsaluys Gerger, Mr. & Mrs. Dikran & Rima Derderyan, Mr. & Mrs. Krikor & Irma Merakyan, Mr. & Mrs. Noubar & Alidz Bostanian, Mr. & Mrs. Manouk & Siran Jamgotchian, Mr. Varoujan Bedrossian, Mrs. Karmen Ketli **$50**, Mr. Krikor Tourshuciyan, Mr. & Mrs. Edward Erzingatzian, Mrs. Sonia Alemian, Mr. Jirayr Gazeryan **$40,** Mr. & Mrs. Mihran & Yercanik Ecityan, Mrs. Germaine Koleoglu, Mrs. Olga Marashlian, Mrs. Eva Alpman, Mr. Nurhan Demirdogen, Mrs. Doreen Kazzaian, Mr. Suren Sirinian **$30**, Mr. Abraham Ertemian, Mr. & Mrs. Hovsep & Mary Doramajian, Mrs. Hermine Gorlon, Mr. Apig Apissoghomian **$25**, Mr. Makar Saryan, Mr. Toros Kilavuz, Mr. Diran Cevahirciyan, Mr. & Mrs. Gaetan & Hermine Dimaria, Mrs. Sona Tibiryan, Mr. Garabet Dirhemciyan, Mr. & Mrs. Markar & Haigo Diradourian **$20.***



Հոգեհանգստեան Կարգ

Service pour le Repos de l'Âme

Service for the Repose of Soul

# ԿԻՐԱԿԻ, 23 Ապրիլ 2017

1. Տ. եւ Տիկ. Գէորգ եւ Թալին Քիւչիւքթաշճիի եւ զաւկին՝ Լարայի,

Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի իրենց սիրեցեալ հօր եւ մեծ հօր՝

ՆՈՒՊԱՐ ՔԻՒՉԻՒՔԹԱՇՃԻԻ

(NUBAR KUCUKTASCI)

Մահուան 11-րդ տարելիցին առիթով

---

2. Տիար Միքայէլ Թօփիքեանի,

Տ. եւ Տիկ. Յարութ եւ Ժագլին Թօփիքեանի,

Տ. եւ Տիկ. Վազգէն եւ Նազենի Ագգոյեանի,

Տ. եւ Տիկ. Մարգ եւ Թալիա Տէրվիշեանի եւ զաւկին՝ Քրիսչընի,

Տ. եւ Տիկ. Արա եւ Գարին Ֆրունճեանի,

Օհան եւ Մարգ Ագգոյաններու,

Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի իրենց սիրեցեալ կնոջ, մօր, մեծ մօր եւ մեծ մեծ մօր՝

ԷԼՄՕՆԻՔ ԹՕՓԻՔԵԱՆԻ

(ELMONIK TOPIKIAN)

Մահուան առաջին տարելիցին առիթով

---

3. Տ. եւ Տիկ. Զարեհ Արսլանեանի եւ զաւակներուն,
Տ. եւ Տիկ. Բաթրիք եւ Լիւսի Եղիայեան Տէօ ԼէՖէվր եւ
ընտանիքին,

Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի իրենց սիրեցեալ մօր եւ մեծ մօր՝

**ՍԻՐՎԱՐԴ ԱՐՍԼԱՆԵԱՆԻ**

**(SIRVART ARSLANIAN)**

Մահուան 40-ին առիթով

---

4. Ժագ Պոյաճեանի,
Մարի Պոյաճեանի,

Գէորգ Պոյաճեանի,

Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի իրենց սիրեցեալ մօր ՝

**ՔՆԱՐ ՄԱՃԱՐԵԱՆԻ**

**(KNAR MADJARIAN)**

Մահուան 40-ին առիթով

# Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի



## ԽՈԿՈՒՄ
## ԵՒ
## ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

*Սիրելի հաւատացեալներ, Հինգշաբթի՝ 27 Ապրիլ 2017-էն սկսեալ ԽՈԿՄԱՆ, ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ տեղի պիտի ունենան ամէն Հինգշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին, Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ մէջ:*

*Կը հրաւիրենք մեր հաւատացեալները մասնակցելու այս հոգեպարար արարողութեան եւ սերտողութեան, որուն ընթացքին միասնաբար պիտի փորձենք ճանչնալ Սուրբ Գիրքը, Եկեղեցւոյ հաւատքն ու առաքելութիւնը, մեր դերն ու մասնակցութիւնը եկեղեցւոյ կեանքին մէջ եւ վերջապէս պատասխան գտնել մեզ յուզող հարցումներուն ու մտահոգութիւններուն:*

*Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին ներկայութիւնը:*

*Աղօթարար՝*

*Տ. Եղիա Ա Քհնյ. Քերվանճեան*

**615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008**
**Rev. Arch. Fr. Yeghia Kervanjyan: (514) 241-9347**
**E-Mail: secretary@saintgregory.ca, www.saintgregory.ca**
**Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal**

# Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի

## St. Gregory the Illuminator Armenian Cathedral

## ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

**6-12 տարեկան երեխաներու համար**

**Կը վերսկսի Կիրակի, 30 Ապրիլ 2017-էն սկսեալ**

# SUNDAY SCHOOL

**For the ages of 6-12 years old children**

**Starting from Sunday, April 30th 2017**

Կիրակնօրեայ Վարժարանին նպատակն է Աստուծոյ խօսքն ու մեր եկեղեցւոյ աւանդոյթները մեր երեխաներուն մտքերուն եւ հոգիներուն մէջ սերմանել:

Երեխաները հաճելի եւ ընկերային մթնոլորտի մէջ կը սորվին Սաղմոսներ եւ երգեր, կը զարգացնեն Հայերէն լեզուն եւ կը ծանօթանան Հայոց Պատմութեան:

Զուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար հեռաձայնել՝

Եկեղեցւոյ գրասենեակ (514) 279–3066

Տէր Եղիա Ա Քհնյ. Քերվանճեանին (514) 241–9347



**Sunday School aims to sow the word of God and the traditions of our Church in our children's minds and souls.**

**In a pleasant and friendly atmosphere, the children will learn Psalms & songs, develop Armenian language skills, & introduce to Armenian history.**

**Fun & fascinating consecutive Fieldtrips**

**For more information and registration call to the Church office (514) 279-3066Archpriest Fr. Yeghia Kervanjyan (514)241-9347**

*615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008*
*Rev. Arch. Fr. Yeghia Kervanjyan: (514)241-9347*
*E-Mail: secretary@saintgregory.ca, www.saintgregory.ca*
*Facebook : Saint Gregory Armenian Apostoloic Church of Montreal*

# ԴՊՐԱՑ
# ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

## Ս. Գրիգոր Լուսաւորիչ
## Առաջնորդանիստ Եկեղեցւոյ

### Հոգեւոր Հովիւն ու Դպրաց Դասի Վարչութիւնը

**Կը յայտնեն թէ պիտի սկսին դպրաց պատրաստութեան Հանդիպումները**

**Այն պատանիներն ու երիտասարդները,**
**որոնք կը փափաքին ծառայել**
**Հայց. Առաք. Եկեղեցւոյ Սուրբ Խորանին եւ մաս կազմել**
**Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Դպրաց Դասին կը խնդրենք**
**հեռաձայնել՝Եկեղեցւոյ Հովիւին** (514) 241 -9347
**Կամ Եկեղեցւոյ գրասենեակ՝**(514)279-3066:

**Հոգեւոր Հովիւ**
**Տէր Եղիա Ա Քհնյ. Քերվանճեան**

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008
Rev, Arch. Fr. Yeghia Kervanjyan: (514) 241-9347
E-Mail: secretary@saintgregory.ca, www.saintgregory.ca
Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



## Մոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի

## Cathédrale Arménienne St-Grégoire l'Illuminateur de Montréal

## St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal

ԿԱՐԳ ԲԱՐԵԽՕՍԱԿԱՆ
ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑՆ
ՈՐՔ ԿԱՏԱՐԵՑԱՆ ՅԸՆԹԱՑՍ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ՎԱՍՆ ՀԱՒԱՏՈՅ ԵՒ ՎԱՍՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ԱՊՐԻԼ 24, 2017
ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 7:00

ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԱՅԱՍՈՒՄ
ՄԷԿ ԴԱՐ ԵՐԿՈՒ ՏԱՐԻ
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ
ԱՍՄՈՒՆՔ՝ ՄԱՐՕ ՄԱՐԳԱՐԵԱՆ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ԱՊՐԻԼ 24, 2017
ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 7:30

ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ
615, STUART AVENUE, OUTREMONT, QC, H2V 3H2

# la collecte

**Avec bénédictions de Sa Grâce Msg Abgar Hovakimyan**
**Primat du Diocèse Arménien du Canada**
**En mémoire des Saints Martyrs du Génocide Arménien**

**With blessings of His Grace Bishop Abgar Hovakimyan,**
**Primate of the Armenian Diocese of Canada**
**In memory of Holy Martyrs of the Armenian Genocide**

Օրհնութեամբ Գանատահայոց Թեմի Առաջնորդ,
Գերշ. Տ. Աբգար Եպիսկոպոս Յովակիմեանի
Ի յիշատակ Հայոց Ցեղասպանութեան Սրբոց Նահատակացն



**Diocèse Canadien de la Sainte Église Apostolique Arménienne**
Armenian Holy Apostolic Church Canadian Diocese
Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Գանատահայոց Թեմ

---

# Samedi 22 avril
# 10 h à 17 h

---

globule
CENTRE DES DONNEURS DE SANG

## Centre Laval
1600, boul. Le Corbusier
Entrée porte # 4

**DONNEZ DU SANG. DONNEZ LA VIE.**

HÉMA-QUÉBEC

## ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Սիրելի Հաւատացեալներ, Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզ, որ յետայսու, ամէն Կիրակի, Ձեր ինքնաշարժները կրնաք կանգնեցնել Bernard փողոցին վրայ գտնուող Ecole Outremont-ի parking-ին մէջ, սկսեալ առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ կ.ե. ժամը 3:00:

## CAR'S PARKING

Dear Parishioners, We would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the Ecole Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm.




- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. Go all the way to the "centre d'éducation". The parking space is on your right.

# ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

**ՏՕՆԵՑԷՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ**

## Pilgrimage to Armenia

**Celebrate Armenia's Independence in Armenia**

## Pèlerinage en Arménie

**Célébrez l'Indépendance de l'Arménie en Arménie**

**14.09.2017** — **28.09.2017**

## 21.09.2017

## PROGRAM — ԾՐԱԳԻՐ — PROGRAMME

| | |
|---|---|
| Thursday, 14.09.2017 | Departure from Canada. |
| Friday, 15.09.2017 | Arrival to Yerevan, meeting at the airport. Hotel accommodation. Welcome dinner. |
| Saturday, 16.09.2017 | Breakfast. Visit to Erebuni-Yerevan Museum. Lunch. Visit to Ararat cognac factory (with degustation). Visit to the Memorial Complex of the Armenian Genocide Tsitsernakaberd. |
| Sunday, 17.09.2017 | Breakfast. Visit to Holy Etchmiadzin, St. Hripsime, and St. Gayane. Lunch. Zvartnots. |
| Monday, 18.09.2017 | Breakfast. Visit to Garni Temple. Visit to Geghard Monastery. Lunch. Transfer to Yerevan. |
| Tuesday, 19.09.2017 | Breakfast. Visit to Lake Sevan and Dilijan. Lunch in Haghartsin. Return to Yerevan. |
| Wednesday, 20.09.2017 | Breakfast. Visit to the History Museum and National Gallery of Armenia. Architectural complex Cascad. Lunch. Visit to Matenadaran. |
| Thursday, 21.09.2017 | Celebration of the 26th anniversary of Independence of the Republic of Armenia. Dinner. |
| Friday, 22.09.2017 | Breakfast. Visit to Khor Virap Church. Noravank. Lunch. Visit to Khndzoresk. Dinner. Overnight in Goris. |
| Saturday, 23.09.2017 | Breakfast. Visit to Stepanakert. Check-in in the hotel. Lunch. City tour. Dinner. Overnight in Stepanakert. |
| Sunday, 24.09.2017 | Breakfast. Tour in Artsakh. Visit to Gandzasar Monastery Complex. Visit to Shushi fortress. Cathedral Ghazanchetsots. Lunch. Return to Goris. Dinner. Overnight in Goris. |
| Monday, 25.09.2017 | Breakfast. Visit to the Tatev Monastery. Visit to Sisian Zorats Stones (Stonehenge of Armenia). Lunch. Return to Yerevan. |
| Tuesday, 26.09.2017 | Full day at leisure. Breakfast in the Hotel. |
| Wednesday, 27.09.2017 | Full day at leisure. Breakfast in the Hotel. Farewell dinner. |
| Thursday, 28.09.2017 | Transportation to the airport and departure from Armenia. |

**During the pilgrimage, meetings with His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, and His Excellency Bako Saakyan, President ot the Republic of Artsakh, are foreseen.**

**The cost of the program is $US 1700 (double room) or $US 1900 (single room) + ticket + travel insurance. This price includes: 1) Hotel accommodation; 2) Meals as mentioned in the above program (alcohol drinks not included); 3) Full comfortable local transportation service and soft drinks during all trips; 4) Professional guide service and entrance fees to the historical and cultural sites; 5) Insurance of the vehicle and passengers.**

615 STUART, OUTREMONT, QC H2V 3H2 · WWW.ARMENIANCHURCH.CA · CONTACT@ARMENIANCHURCH.CA · 514 276 9479